



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

00010 ք. Երևան, Կառավարական տուն 1

**№ 02/05.1/37595-2019**

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ  
ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածի՝ Ձեզ ենք ներկայացնում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-216-03.07.2019-ՊԻ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները:

Հարգանքով՝

**ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ**

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-216-03.07.2019-ՊԻ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերով առաջարկվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 287-րդ հոդվածով նախատեսել նույն օրենսգրքի 10-րդ գլխով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտերի՝ մինչև դատական կարգով բողոքարկելը վարչական կարգով բողոքարկելու պարտադիրություն:

Նախագծին կից ներկայացված հիմնավորման համաձայն՝ գործող կարգավորումների տիրույթում վարչական ակտերի կամ դատական, կամ վարչական կարգով բողոքարկման հնարավորության առկայության պայմաններում առաջացել են անձի իրավունքների ոչ արդյունավետ պաշտպանության, ողջամիտ ժամկետում իրավունքների պաշտպանության, ինչպես նաև դատարանների անհարկի ծանրաբեռնվածության խնդիրներ, իսկ նախագծերի ընդունման արդյունքում՝ դատարանում կվիճարկվեն բացառապես վերադասության կարգով չվերացված վարչական ակտերը, որոնք վարչական մարմնի կողմից ճիշտ, օբյեկտիվ, բազմակողմանի վարչարարություն իրականացնելու, նախկինում նմանատիպ գործերով արդեն իսկ դատական պրակտիկան հաշվի առնելու պարագայում, կհանգեցնեն վարչական դատարանի ծանրաբեռնվածության առնվազն 30 տոկոսի չափով նվազեցման:

Այս առումով հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով հանգամանորեն անդրադարձել է արդարադատության մատչելիության երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին: Մասնավորապես, 2015 թվականի հունիսի 26-ի ՍԴՈ-1222 որոշմամբ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարել վկայակոչել ՄԻԵԴ-ի արտահայտած իրավական դիրքորոշումն առ այն, «(...), որ պետությունը դատարան դիմելու

իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, «...պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի՝ դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի դրանից, սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն» (Case of Khalfaoui v. France, application no. 34791/97, 14/03/2000): Իսկ մեկ այլ՝ 2016 թվականի մարտի 10-ի ՍԴՈ-1257 որոշմամբ իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ. « (...) դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը (...):»:

Շարադրվածի համատեքստում գտնում ենք, որ նախատեսված կարգավորումների և դրանով հետապնդվող նպատակների միջև առկա է ողջամիտ հարաբերակցությունը, այդուհանդերձ, նախագծային դրույթների կիրառման ընթացքում իրավական խնդիրներից խուսափելու, ինչպես նաև նախագծով հետապնդվող իրավաչափ նպատակին հասնելու համար ստորև ներկայացնում ենք նախագծի վերաբերյալ որոշ նկատառումներ: Այսպես՝

1.1. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի 10-րդ գլխով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերը կարող են վիճարկվել դատական կարգով՝ միայն վարչական կարգով բողոքարկվելուց հետո:

Այս առումով հարկ է նշել, որ միայն երկաստիճան բողոքարկման համակարգի նախատեսումը բավարար չէ վարչական դատարանի ծանրաբեռնվածությունը նվազեցնելու համար: Անհրաժեշտ է նաև նախատեսել պետական տուրք վարչական պատասխանատվություն սահմանող ակտերի դատական բողոքարկման համար: Մասնավորապես, առաջարկում ենք գույքային պահանջի առնչությամբ գանձվող պետական տուրքի գումարը նախատեսել հայցագնի նկատմամբ տոկոսային հարաբերակցությամբ, իսկ ոչ գույքային պահանջի առնչությամբ՝ նախատեսել 4000 դրամի չափով պետական տուրքի գումար:

Պետական տուրքի նախատեսումը հատկապես կարևորվում է տուգանային միավորների համակարգի ներդրմանն ուղղված օրինագծերի ընդունման համատեքստում, քանի որ, ըստ կանխատեսումների, տուգանային միավորով պատժված վարորդները, դրա բացասական հետևանքների վրա հասնելը հետաձգելու նկատառումներով պայմանավորված,

բողոքարկելու են վարչական ակտերը՝ անկախ դրանց հետ համաձայն լինելու կամ չլինելու հանգամանքից:

1.2. Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված է ընդհանուր կարգավորում, որի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կայացրած վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված վարչական կարգով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատական կարգով՝ բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

Այս առումով հարկ է նկատի ունենալ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները, որոնց համաձայն, եթե ակտը բողոքարկվել է վարչական և դատական կարգով միաժամանակ, ապա բողոքը ենթակա է դատական քննության, որի դեպքում վարչական մարմնում հարուցված վարույթը կարճվում է:

Առաջարկում ենք պրակտիկայում նման իրավիճակներից խուսափելու համար համանման կարգավորում նախատեսել նաև նախագծում:

1.3. Հարկ է նշել, որ վարչական բողոքարկումը չպետք է հանգեցնի դատական պաշտպանության ոչ ողջամիտ ուշացումների: Այս առումով գտնում ենք, որ վարչական ակտի՝ վարչական կարգով բողոքարկումը պարտադիր դարձնելու դեպքում բողոքարկման վարույթի համար անհրաժեշտ է նախատեսել ավելի կարճ ժամկետներ, ուստի, առաջարկում ենք Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 291-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով.

«2. Սույն օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ բողոքները քննվում են դրանց ստացման օրվանից տասնհինգօրյա ժամկետում:»:

2. «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.2-րդ մասով.

«1.2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 10-րդ գլխով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերը կարող են վիճարկվել դատական կարգով՝ միայն վարչական կարգով բողոքարկվելուց հետո:»:

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի «Վարչական դատարան դիմելու իրավունքը» վերտառությամբ 3-րդ հոդվածը սահմանում է այն անձանց շրջանակը (դեպքերը), ովքեր օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունեն դիմելու վարչական դատարան: Մինչդեռ նախագծով նախատեսված կարգավորումն ըստ էության նախատեսում է բացառություն ընդհանուր կանոնից՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի միայն 10-րդ գլխով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի առումով:

Այս առումով գտնում ենք, որ նախագծով նախատեսված կարգավորումը դուրս է Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի կարգավորման առարկայից, ուստի, առաջարկում ենք համապատասխան լրացումը նախատեսել ոչ թե նշված հոդվածում, այլ գործերի ընդհատության կամ հայցադիմումը վարույթ ընդունելը, վերադարձնելը, վերահասցեագրելը, հայցադիմումն ընդունելը մերժելու վերաբերյալ գլուխներում:

3. Նախագծերում առկա են նաև խմբագրման և հստակեցման կարիք ունեցող դրույթներ: Այսպես՝

Նախագծերում միաժամանակ կիրառվում են «բողոքարկել», «վիճարկել» և «գանգատ» եզրույթները: Այս առումով անհրաժեշտ է նկատի ունենալ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները, որոնց համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս՝ կիրառվում են միևնույն բառերը, եզրույթները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:

Ամփոփելով շարադրվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ բարձրացված խնդիրների համատեքստում նախագծերն ունեն լրամշակման կարիք:



14 օգոստոսի 2019 թվականի N 1121 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ  
(ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Ռաֆիկ Գրիգորյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (Պ-216-03.07.2019-ՊԻ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏ

2019 թ. օգոստոսի 14  
Երևան



Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.**

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 287-րդ հոդվածը շարադրել հետեյալ խմբագրությամբ.

Վարչական իրավախախտման վերաբերյալ որոշման բողոքարկման կարգը

1) Վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթն իրականացնող մարմնի կայացրած վարչական իրավախախտման վերաբերյալ որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված վարչական կարգով՝ կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված դատական կարգով, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

2) Սույն օրենսգրքի 10-րդ գլխով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերը կարող են վիճարկվել դատական կարգով միայն վարչական կարգով բողոքարկվելուց հետո:

3) Որոշումը վարչական կարգով բողոքարկվում է վարչական ակտն ընդունած վարչական մարմին, վարչական մարմնի վերադաս վարչական մարմին կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ այլ իրավասու վարչական մարմին:

Եթե վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշումը սույն օրենսգրքի 283-րդ հոդվածով սահմանված կարգով հանձնվել է էլեկտրոնային փոստով, ապա այդ որոշումը կարող է գանգատարկվել նաեւ նույն էլեկտրոնային փոստով՝ գանգատն ստանալու մասին էլեկտրոնային ծանուցմամբ:

**Հոդված 2.**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-216'-03.07.2019-ՊԻ-011/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ  
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

### **Հոդված 1.**

1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի (Համարը՝ ՀՕ-139-Ն) օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 1.2 մասով՝ հետևալ բովանդակությամբ՝

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 10-րդ գլխով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերը կարող են վիճարկվել դատական կարգով միայն վարչական կարգով բողոքարկվելուց հետո»:

### **Հոդված 2.**

2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:



## Հիմնավորում

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի  
ընդունման վերաբերյալ

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով նախատեսվում է որոշ վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերի արտադատական կարգով բողոքարկման պարտադիր նախապայմանի սահմանում: Ներկայիս իրավակարգորումների տիրույթում վարչական ակտերի կամ դատական, կամ վարչական կարգով բողոքարկման հնարավորության առկայության պայմաններում առաջացել են հետևյալ խնդիրները.

- Անձի իրավունքների ոչ արդյունավետ պաշտպանություն. Ասվածի ներքո հարկ է նկատի ունենալ, որ որևէ կառուցակարգով անձի իրավունքների պաշպանությունը պետք է ապահովվի բովանդակային արդյունավետություն և չպետք է կրի զուտ ձևական բնույթ: Մասնավորապես՝ 22 Սահմանադրության 75-րդ հոդվածի սահմանմամբ՝ պետության վրա է դրվում անձի իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանելու պարտականություն, և ոչ թե ձևականորեն մարդու իրավունքներին համահունչ իրավակարգավորում, որով ֆորմալ առումով ամրագրվում է անձի իրավունքը և դրա իրականացման անհրաժեշտ ընթացակարգը, որը, սակայն, չի ապահովում արդյունավետություն: Այսինքն՝ իրավունքի իրացման կառուցակարգն ու ընթացակարգը պետք է միտված լինեն ապահովելու անձի Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքի հնարավորինս արդյունավետություն, նպատակադրված հետևանքին հասնելու ողջամիտ հնարավորություն:

- Ողջամիտ ժամկետում իրավունքների պաշտպանության խախտում. Ըստ էության, նշվածն ուղղակիորեն ածանցվում է իրավունքների ոչ արդյունավետ պաշտպանության խնդրից: Մասնավորապես՝ համաձայն վիճակագրական

տվյալների՝ 2018 թվականի ընթացքում 22 վարչական դատարանը՝ կազմված 24 դատավորից, ստացել է 13909 դատական գործ, որում չի ներառվում նախորդ տարիներից փոխանցված վարչական գործերի թիվը՝ : Հարկ է նկատել, որ նշված քանակի մեջ գերակշռող մասը կազմում են 2.000-20.000 դրամի չափով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ որոշումների վիճարկումները: Նշված որոշումների մոտ 5 տոկոսն է մինչև դատարանում վիճարկվելը բողոքարկվել արտադատական կարգով: Նման պարագայում անձի իրավունքների դատական կարգով պաշտպանության համատեքստում ողջամիտ ժամկետներում գործի քննության իրավունքը բառացիորեն խախտվում է:

• Դատարանների անհարկի ծանրաբեռնվածություն. Վերը նշված վիճակագրության հաշվառմամբ անհրաժեշտ է արձանագրել, որ որոշակի վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով դատարանի ծանրաբեռնվածությունն ուղղակիորեն առաջացնում է նաև այլ վարչական գործերով անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության բացառում, այսինքն՝ ծանրաբեռնված դատարանն առնվազն հնարավորություն չունի ապահովել դատարանի վարույթում գտնվող այլ վարչական գործերի (Վարչական իրավախախտումների վերաբերյալ 22 օրենսգրքի օրենսգրքի 10-րդ գլխով նախատեսված իրավախախտումների վերաբերյալ գործերից զատ) ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի պատշաճ իրացում: Օրենսդրական փոփոխության անհրաժեշտությունը.

Ըստ էության, գործող իրավակարգավորման պայմաններում առաջացած խնդիրների լուծումը ենթադրում է օրենսդրական փոփոխության անհրաժեշտություն, մասնավորապես՝ փոփոխություն ապահովելու՝

- ✓ Անձի իրավունքների պաշտպանության արդյունավետ կառուցակարգերի և ընթացակարգերի սահմանումը
- ✓ Նյութական (թե անձի և թե պետության) ռեսուրսների խնայողությունը
- ✓ Ողջամիտ ժամկետում իրավունքների պաշտպանության հնարավորությունը
- ✓ Դատարանների անհարկի ծանրաբեռնվածության թեթևացումը
- ✓ Դատարանների գործունեության արդյունավետության բարձրացումը:

Առաջարկվում է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 287-րդ հոդվածով նախատեսել նույն օրենսգրքի 10-րդ

<sup>1</sup> Վիճակագրությունը վերցվել է Հայաստանի Հանրապետության դատական իշխանության պաշտոնական կայքից: Հասանելի է հետևյալ հղումով.

[http://www.court.am/index.php?link=arm/left/statistics/2018/adm/by\\_court.htm](http://www.court.am/index.php?link=arm/left/statistics/2018/adm/by_court.htm)

գլխով սահմանված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարչական ակտերի՝ մինչև դատական կարգով բողոքարկելը վարչական /վերադասության, առկայության դեպքում քվազիդատական մարմնում) կարգով բողոքարկելու պարտադիրություն: Համապատասխան փոփոխություն նաև Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում: Արդյունքում՝ դատարանում կվիճարկվեն բացառապես վերադասության կարգով չվերացված վարչական ակտերը, որը, վարչական մարմնի կողմից ճիշտ, օբյեկտիվ, բազմակողմանի վարչարարություն իրականացնելու, նախնկինում նմանատիպ գործերով արդեն իսկ դատական պրակտիկան հաշվի առնելու պարագայում, կհանգեցնի վարչական դատարանի ծանրաբեռնվածության առնվաճ 30 տոկոսի նվազեցման:

Վարչական բողոքարկման միջոցների սպառման պահանջը ամերիկյան վարչական իրավունքի ղոկտրինալ սկզբունքներից է, որը սկիզբ է առել դեռևս 19-րդ դարում, երբ դատարանները պահանջել են սպառել վարչական միջոցները մինչև դատարան դիմելը: Մինչ օրս սա դատավարության հիմնական կանոններից է: Իհարկե, ամերիկյան մասնագետները քննարկում են դրա նպատակահարմարությունը բացառիկ դեպքերում, սակայն նրանց շրջանում չկա վեճ այն հարցի շուրջ՝ արդյո՞ք վարչական բողոքարկման միջոցների սպառումը ինքնին դատական պաշտպանության համաչափ սահմանափակում է, թե՛ ոչ: Նման սահմանափակումը ոչ միայն համարվում է իրավաչափ, այլև անհրաժեշտ պայման իշխանությունների բաժանման և հակակշռման համակարգի ապահովման համար: Գործադիր իշխանությունը պետք է հնարավորություն ունենա շտկելու իր սխալները մինչև դատական իշխանության միջամտությունը: Սա կարևոր գործոն է գործադիր իշխանության ինքնուրույնությունը երաշխավորելու համար<sup>2</sup>:

Եվրոպական երկրներում նս վարչական բողոքարկման միջոցների սպառման ղոկտրինը լայնորեն տարածված է և միջոցների սպառման պահանջը համարվում է հիմնական<sup>3</sup>: Մասնավորապես, այդպիսի երկրների ցանկում են ներառված

<sup>2</sup> MICHAEL J. WHELLAN, EXHAUSTION OF ADMINISTRATIVE REMEDIES, Graves Dougherty Hearon & Moody, 2010 - [https://www.abaustin.com/files/exhaustion\\_of\\_administrative\\_remedies.pdf](https://www.abaustin.com/files/exhaustion_of_administrative_remedies.pdf), RAOUL BERGER, EXHAUSTION OF ADMINISTRATIVE REMEDIES, 48 Yale L.J. (1939) - <http://digitalcommons.law.yale.edu/yfj/vol48/iss6/2>

<sup>3</sup> St'u Jean-Marie Woehrling: Judicial Control of Administrative Authorities in Europe, HRVATSKA JAVNA UPRAVA, god. 6. (2006.), br. 3, էջ 42 - <https://hrcak.srce.hr/file/200440>

Իսպանիան<sup>4</sup>, Բելգիան, Չեխիան, Իռլանդիան, Լյուքսեմբուրգը, Մալթան, Ավստրիան, Սլովենիան, Սլովակիան, Ֆինլանդիան, Գերմանիան<sup>5</sup>, Շվեդիան, Մեծ Բրիտանիան, Հունգարիան<sup>6</sup>:

Հարկ է նաև նշել, որ համապատասխան ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ պետությունը օրինակ 2000 դրամի չափով պատասխանատվություն նախատեսող վարչական ակտի իրավաչափությունը ստուգելու համար ծախսում է միջինում 38.000 ՀՀ դրամ, որի մեջ ներառվում է նաև ներկայացուցչի համար միջինը վճարվող 10.000-15.000 դրամը (ՀՀ վարչական դատարան 2017թ. ընթացքում ընդդեմ ՀՀ ՀՈ ներկայացվել է շուրջ 9000 հայցադիմում, որից մոտ 8500-ը իրավաբանական ծառայություններ մատուցող կազմակերպությունների կամ փաստաբանների միջոցով), մինչդեռ, արտադատական կարգով վեճի քննարկումը և լուծումը էական ռեսուրսներ չեն պահանջում: Հարկ է նկատել, որ զգալի քանակ են կազմում այն հայցադիմումները, որոնցով հայցվորը հայտնում է, որ վարչական իրավախախտումը կատարել է ոչ թե ինքը, այլ իր կողմից մատնանշված անձը, և միջնորդում է տվյալ անձին վարույթի մասնակից դարձնել: Տվյալ անձին լսելուց և նրա կողմից խախտում թույլ տալու փաստը արձանագրելուց հետո դատարանը բավարարում է հայցվորի հայցը՝ ՀՈ-ից բռնագանձելով փաստաբանական ծախսերը: Արդյունքում, ՀՀ ՀՈ-ն կազմում է նոր արձանագրություն հայցվորի կողմից մատնանշված անձի վերաբերյալ՝ տուգանելով նրան 5.000 կամ 10.000 ՀՀ դրամ, սակայն փաստաբանական ծախսերի անվան տակ ավելի մեծ գումար վճարվում է բյուջեից հոգուտ հայցվորի: Արդյունքում՝ պետությունը ծախսում է մոտ 40.000 դրամ 5000 դրամ տուգանքի գումարը պետական բյուջեի գանձելու համար: Նախագծով առաջարկվող կարգավորումը չի սահմանափակում անձի դատարան դիմելու իրավունքը, այսինքն՝ արտադատական կարգով իրավունքների պաշտպանության նախապայմանի սահմանում չի բացառում անձի դատարան դիմելու իրավունքը, քանզի անձը ոչ թե զրկվում է դատարան դիմելու իրավունքից, այլ պարտավոր է սպասել ոչ դատական կարգով իրավունքների պաշտպանության եղանակները, ապա միայն հայցել դատական պաշտպանություն: Արտադատական կարգով

<sup>4</sup> [http://www.aca-europe.eu/en/eourtour/countries/spain/spain\\_en.pdf](http://www.aca-europe.eu/en/eourtour/countries/spain/spain_en.pdf)

<sup>5</sup> Տե՛ս Wolters Kluwer., Verwaltungsrechtsschutz in Deutschland, Հասանելի է հետևյալ հղումով.

([https://books.google.am/books?id=wye0g7FF9M8C&printsec=frontcover&hl=hy&source=gbs\\_ge\\_summary\\_r&cad=0#v=onepage&q&f=false](https://books.google.am/books?id=wye0g7FF9M8C&printsec=frontcover&hl=hy&source=gbs_ge_summary_r&cad=0#v=onepage&q&f=false)., 15.03.2018թ.):

<sup>6</sup> [https://e-justice.europa.eu/content\\_access\\_to\\_justice\\_in\\_environmental\\_matters-300-hu-en.do?member=1](https://e-justice.europa.eu/content_access_to_justice_in_environmental_matters-300-hu-en.do?member=1)

վարչական ակտերի վիճարկման նախապայմանի սահմանումը ենթադրում է համակողմանի արդյունավետության բարձրացում: Անհրաժեշտ է նաև փաստել, որ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2004 թվականի դեկտեմբերի 15-ի (2004) 20 բանաձևում արձանագրվել է, որ ֆիզիկական և իրավաբանական անձինք առաջացած տարաձայնությունները կարող են կարգավորել այլ միջոցներով մինչ դատարան դիմելը: Նախարարների կոմիտեն ընդհանուր առմամբ դրական է դիտարկում մինչդատական կարգով իրավունքների պաշտպանության կառուցակարգերի նախատեսումը օրենսդրությունում, և դատարան դիմելիս այդպիսի միջոցների սպառված լինելու նախապայմանը, միայն թե այդպիսի միջոցները պետք է բխեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածից և լինեն արդյունավետ: Միաժամանակ Նախարարների կոմիտեն արձանագրել է, որ մինչդատական կարգով իրավունքների պաշտպանության կառուցակարգերի նախատեսումը բեռնաթափում է դատարաններին, դրանով իսկ ապահովելով դրանց արդյունավետությունը: Սա բխում է վարչական մարմինների և դատարանի շահերից, ինչպես նաև նվազեցնում է անհատի ընթացակարգային ծախսերը: Վարչական ակտերի վարչական կարգով բողոքարկման պարտադիրությունը կնպաստի նաև վարչական մարմինների վարչարարության բարելավմանը: Ներկայումս վարչական ակտերի հասցեատերերը հիմնականում չեն օգտվում վարչական բողոքարկումից, ինչի արդյունքում այդ կարևոր ինստիտուտը գրեթե մատնվել է անգործության: Վարչական կարգով բողոքարկման պարտադիրությունը կներգրավի նաև վերադաս մարմին (պաշտոնատար անձին) այն սուբյեկտների շարքում, որոնք պատասխանատու կլինեն տվյալ վարչական ակտի իրավաչափության համար: Իսկ դա կբարձրացնի նաև վարչական մարմինների պատասխանատվությունը, որոնք, գիտակցելով, որ իրենց որոշումները պարտադիր դառնալու են վերադասի ստուգման առարկա, առավել զգոնություն կցուցաբերեն:

